ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«14» հունվարի 2019 թվականի № 10-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2018թ նոյեմբերի 27-ի թիվ 01-29/868 գրությունը, ընկերության կողմից 2019թ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի ԳՍՊԿ-ում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության, գազահորերի վերակառուցման և արդիականացման աշխատանքների կատարման ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման անհրաժեշտությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊ ընկերությանը՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստակայանի (ԳՍՊԿ) տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2013 թվականի հունվարի 31-ին տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ՊՎ-146 պայմանագրի հավելված 1-ի ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ աղաջրի արդյունահանման ծավալը ավելացնելով 520 հազ. մ^3-ով:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն 2013 թվականի հունվարի 31-ի թիվ ՊՎ-146 ընդերքօգտագործման պայմանագրի հավելվածում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-

օրյա ժամկետում ընդերքօգտագործման պայմանագրի հավելվածի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագրի հավելվածում կատարված փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում, ընկերությանը տրամադրել ընդերքօգտագործման պայմանագրի հավելվածի փոփոխված տարբերակը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի հավելվածը իր կողմից չվավերացնելու՝ ինչպես նաև, սույն հրամանի 1-ին կետի պայմանը չապահովելու դեպքում սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

1/11/2019

X

VERIFIED OCSP 1/11/2019 19:43:31 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: VARDANYAN HAKOB 3914890533
/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ